ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«15» փետրվարի 2018 թվականի № 19-Ա

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի № 1721-Ն որոշմամբ սահմանված՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպությունների ընտրության, գումարի տրամադրման կարգի ու պայմանների 10-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի հունվարի 16-ի № 02-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 14-ի եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող ընտրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված՝ «Սպառողների աջակցման կենտրոն», «Սպառողների խորհրդատվության կենտրոն» և «Բնակարանային կոմունալ ոլորտի աշխատողների միավորում» հասարակական կազմակերպություններին:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Սվետլանա Թումանյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի № 1721-Ն որոշմամբ սահմանված կարգի և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի փետրվարի 9-ի № 16-Ա հրամանով հաստատված ընթացակարգի համաձայն իրականացնել գումարների տրամադրումն ընտրված կազմակերպություններին:

3. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ

Հովհաննես Բուրմանյանին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովել սույն հրամանի պատճենի հանձնումն ընտրված կազմակերպություններին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ